Ղեկավար անձնակազմի զեկույց

Ընդհանուր տեղեկություններ և իրավական կարգավիճակը

Կազմակերպության սեփականության գոյացման աղբյուրներ

- այլ անձանց նվիրատվություններ,
- անդամների անդամավճարները, ինչպես նաև այլ գույքային իրավունքների փոխանցում,
- դրամաշնորհներ:

Գործունեության ոլորտներ

- Ակումբի սպորտային համբավի բարձրացում,
- աջակցություն ՀՀ ֆուտբոլի զարգացմանը,
- հանրապետական և միջազգային մրցաշարերի կազմակերպում,
- օժանդակություն մարզիկների սոցիալական ապահովությանը և առողջության պահպանմանը:

Կազմակերպությունն իր հիմնադրման օրն ունեցել է «Ալաշկերտ»պրոֆեսիոնալ թիմը, հաջորդ տարում ստեղծել է պրոֆեսիոնալ երկրորդ թիմը՝ «Ալաշկերտ-2»-ը: Այժմ, Կազմակերպության հովանու ներքո հանդես է գալիս Ալաշկերտ-աղջիկներ կանանց թիմը, որը մասնակցում է Հայաստանի Առաջին խմբի առաջնությանը: Բացի այդ, Կազմակերպությունն այսօր ունի տղաների մանկապատանեկան ինը թիմ, որոնք բոլորն էլ մասնակցում են ՀՖՖ հովանու ներքո կազմակերպվող և անցկացվող մանկապատանեկան տարբեր տարիքային խմբերի առաջնություններին ու մրցաշարերին:

2023-2024 թթ. կազմակերպությունն իր Ալաշկերտ և Ալաշկերտ-2 պրոֆեսիոնալ թիմերով մասնակցում է, համապատասխանաբար, IDBANK Հայաստանի Պրեմիեր Լիգայի և Հայաստանի Առաջին խմբի առաջնություններին:

2023 թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ Ակումբի գլխավոր թիմը՝ Ալաշկերտը, Հայաստանի ֆուտբոլի IDBANK Պրեմիեր Լիգայում գտնվել է առաջատարների խմբում, իսկ 2023 թ. մարտի 31-ի դրությամբ շարունակում է գտնվել առաջատարների խմբում և՝ ավանդույթի համաձայն, պայքար է մղում առաջնության մրցանակային տեղերի համար:

2023թ. Ակումբի գլխավոր թիմը՝ Ալաշկերտը, Հայաստանի ֆուտբոլի IDBANK Պրեմիեր Լիգայում գրավելով չորրորդ տեղը, իններորդ տարին անընդմեջ նվաճեց

ՈՒԵՖԱ-ի ակումբային մրցաշարերին մասնակցելու իրավունք: Մեր թիմը հանդես եկավ ՈՒԵՖԱ-ի 2023-2024 թթ. Կոնֆերենցիայի Լիգայի խաղարկությունում:

2023 թ. տարեվերջին Ակումբի երկրորդ թիմը՝ Ալաշկերտ-2-ը, զբաղեցնում էր մրցաշարային աղյուսակի նախավերջին հորիզոնականը: Թիմն այժմ փոքր-ինչ առաջադիմել է և 15 թիմերի պայքարում զբաղեցնում է 12-րդ տեղը: Նշենք, որ Ակումբի ֆուտզալի թիմը՝ Ալաշկերտ ֆզ-ն, ընթացիկ մրցաշրջանում հանդես է գալիս Առաջին խմբի առաջնությունում:
2023 թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ ԱկումբիԱլաշկերտ-աղջիկներ թիմը Հայաստանի կանանց ֆուտբոլի Առաջին խմբի առաջնությունում դիրքավորվել էր մրցաշարային աղյուսակի վերջին տեղում և այժմ պահպանում է նույն դիրքը:
Կազմակերպության ղեկավարությունը, մարզչական անձնակազմը ու ֆուտբոլիստները վստահ են, որ ունենալու են էլ ավելի մեծ ձեռքբերումներ և ավելի հաջող են հանդես գալու ՈՒԵՖԱ-իակումբային հաջորդ մրցաշարերում:

<u>Գործառնական նկարագիր</u>

Ֆուտբոլային ակումբի կայացման և զարգացման ճանապարհին Կազմակերպության շուկայական ռիսկերն առաջին հերթին բնորոշվում են նրանով, որ Հայաստանում դեռ ձևավորված չեն մի շարք ժամանակակից ֆինանսավորման մեխանիզմներ սպորտի՝ ընդհանրապես, և ֆուտբոլի՝ մասնավորապես, բնագավառներում: Համաշխարհային պրակտիկայում օգտագործվող ֆուտբոլային ակումբների ֆինանսավորման աղբյուրներից գովազդը, խաղերի տոմսերի վաճառքն ու հեռարձակումները, հեղինակային իրավունքի օգտագործումը և այլն Հայաստանում գրեթե չեն գործում: Այս պատճառով Ակումբի ֆինանսավորումը իրականացվել է նվիրաբերությունների միջոցով:
Ակումբի համար շատ կարևոր են Եվրոպայի Լիգայի մրցաշարերին մասնակցությունը քանի որ այս դեպքում առկա են վերը նշված ֆինանսավորման աղբյուրները և Եվրոպայի Լիգայի կողմից տրամադրվող դրամաշնորհները, որոնք ուղղվում են թիմի պատրաստվածության բարձրացմանը և զարգացմանը:

Կազմակերպության իրացվելիության ռիսկը բավականին ցածր է: Դրա հիմքում ընկած է ցածր գործառնական պարտավորությունների մակարդակը, որոնք հեշտությամբ կարող են մարվել բարձր իրացվելիություն ունեցող ակտիվների և դրամական միջոցների ու դրանց համարժեքների շնորհիվ:
Կազմակերպության ոչ ածանցյալ ֆինանսական պարտավորությունների գծով պայմանագրային մարման ժամկետները և ոչ ածանցյալ ֆինանսական ակտիվների գծով ակնկալվող մարման ժամկետները կազմում են մեկ ամիս:

Հայաստանի Հանրապետության տնտեսության զարգացման ներկա փուլում ապահովագրության շատ տեսակներ զարգացման սկզբնական փուլում են և լայնորեն չեն կիր առվում:

Հայաստանի Հանրապետության տնտեսության զարգացման ներկա փուլում ապահովագրության շատ տեսակներ զարգացման սկզբնական փուլում են և լայնորեն չեն կիր առվում:
Կազմակերպությունը ապահովագրված չէ ակտիվների կորստի կամ այլ անձանց կողմից պարտավորությունների չկատարման հետևանքով վնասներ կրելու իրադարձություններից:
Քանի դեռ Կազմակերպությունը ապահովագրված չէ համապատասխան ռիսկերից, առկա է ակտիվների կորստի կամ ոչնչացման վտանգ, որը կարող է անբարենպաստ ազդեցություն ունենալ Կազմակերպության գործունեության վրա:

Կազմակերպության գործունեության ժամկետը սահմանափակված չէ:
Կազմակերպությունը չունի մասնաճյուղեր կամ իր կողմից վերահսկվող իրավաբանական անձիք:

Ղեկավար անձնակազմ

2023թ. ֆինանսական տարում Կազմակերպության ղեկավար անձնակազմը եղել է՝

- Գլխավորտնօրեն՝ ԼիպարիտՆավոյան,
- հաշվապահ՝ Մելսիդա Ղարիբյան,

Կազմակերպության անդամները և ղեկավար անձնակազմը Կազմակերպության սեփականության նկատմամբ բաժնի իրավունք չունեն:

««Ալաշկերտ» Ֆուտբոլային Ակումբ» ՀԿ
Իրավաբանական հասցե՝ ՀՀ, Երևան, Դավիթաշեն 2-րդ թաղ., 26շ., բն. 29:

Գլխավորտնօրեն՝ ԼիպարիտՆավոյան

11.04.2024թ.

Audit ARMENIA

«ԱԼԱՇԿԵՐՏ» ՖՈՒՏԲՈԼԱՅԻՆ ԱԿՈՒՄԲ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ

ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԱՆԿԱԽ ԱՈՒԴԻՏՈՐԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

2023թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա վերաբերյալ

Պետական ռեգիստրի գրանցման համար	211.171.57441
Պետական ռեգիստրի գրանցման վկայականի համար	03 Ա 207441
Պետական ռեգիստրի գրանցման ամսաթիվ	27.12.2011թ.
Գտնվելու վայրը	ՀՀ, Երևան, Դավթաշեն 2 թաղ., 26շ, բն 29

Audit ARMENIA

Բովանդակություն

3 Անկախ աուդիտորական եզրակացություն

6 Ֆինանսական վիճակի մասին հաշվետվություն

8 Շահույթի կամ վնասի և այլ համապարփակ Ֆինանսական արդյունքների մասին հաշվետվություն

10 Զուտ ակտիվներում փոփոխությունների մասին հաշվետվություն

11 Դրամական միջոցների հոսքերի մասին հաշվետվություն

12 Ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրություններ

ԱՆԿԱԽ ԱՈՒԴԻՏՈՐԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Ներկայացվում է «Ալաշկերտ» ֆուտբոլային ակումբ Հասարակական Կազմակերպության Ղեկավարությանը

Կարծիք

Մենք աուդիտի ենք ենթարկել «Ալաշկերտ» ֆուտբոլային ակումբ Հասարակական Կազմակերպության (այսուհետ՝ Կազմակերպություն) ֆինանսական հաշվետվությունները, որոնք ներառում են ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունը՝ առ 31 դեկտեմբերի 2023թ., ինչպես նաև այդ ամսաթվին ավարտված տարվա համար շահույթի կամ վնասի և այլ համապարփակ ֆինանսական արդյունքի մասին, զուտ ակտիվներում փոփոխությունների մասին, դրամական միջոցների հոսքերի մասին հաշվետվությունները, և ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրությունները, ներառյալ՝ հաշվապահական հաշվառման նշանակալի քաղաքականության ամփոփը:
Մեր կարծիքով, կից ֆինանսական հաշվետվությունները բոլոր էական առումներով տալիս են Կազմակերպության 2023 թվականի դեկտեմբերի 31-ի դրությամբ ֆինանսական վիճակի, ինչպես նաև այդ ամսաթվին ավարտված տարվա ֆինանսական արդյունքի, զուտ ակտիվներում փոփոխությունների և դրամական միջոցների հոսքերի ճշմարիտ և իրական պատկերը՝ համաձայն Ֆինանսական Հաշվետվությունների Միջազգային Ստանդարտի (ՖՀՄՍ):

Կարծիքի հիմք

Աուդիտն անցկացրել ենք Աուդիտի միջազգային ստանդարտներին (ԱՄՍ-ներ) համապատասխան: Այդ ստանդարտներից բխող մեր պատասխանատվությունը լրացուցիչ նկարագրված է այս եզրակացության՝ *Աուդիտորի պատասխանատվությունը ֆինանսական հաշվետվությունների աուդիտի համար* բաժնում: Մենք անկախ ենք Կազմակերպությունից՝ համաձայն Հաշվապահների Էթիկայի Միջազգային Ստանդարտների Խորհրդի կողմից հրապարակված Պրոֆեսիոնալ հաշվապահների Էթիկայի կանոնագրքի (ՀԷՄՍԽ կանոնագիրք) և պահպանել ենք էթիկայի այլ պահանջները՝ համաձայն ՀԷՄՍԽ կանոնների և Հայաստանի Հանրապետությունում ֆինանսական հաշվետվությունների աուդիտին վերաբերող էթիկայի պահանջների:
Մենք համոզված ենք, որ ձեռք ենք բերել բավականաչափ ու համապատասխան աուդիտորական ապացույցներ՝ մեր կարծիքն արտահայտելու համար:

Ղեկավարության և կառավարման լիազոր անձանց պատասխանատվությունը

Ղեկավարությունը պատասխանատվություն է կրում ՖՀՄՍ-ների համաձայն ֆինանսական հաշվետվությունների պատրաստման համար, որոնք տալիս են ճշմարիտ և իրական պատկեր, և այնպիսի ներքին հսկողության համար, որն ըստ ղեկավարության, անհրաժեշտ է խարդախության կամ սխալի հետևանքով էական խեղաթյուրումներից զերծ ֆինանսական հաշվետվությունների պատրաստումը ապահովելու համար:
Ֆինանսական հաշվետվությունները պատրաստելիս՝ ղեկավարությունը պատասխանատու է Կազմակերպության անընդհատ գործելու կարողության գնահատման համար՝ անհրաժեշտության դեպքում բացահայտելով անընդհատությանը վերաբերող հարցերը, ինչպես նաև հաշվապահական հաշվառման անընդհատության հիմունքը կիրառելու համար, եթե ղեկավարությունը չունի

Կազմակերպությունը լուծարելու կամ Կազմակերպության գործունեությունը դադարեցնելու մտադրություն, կամ չունի այդպես չվարվելու որևէ իրատեսական այլընտրանք:
Կառավարման լիազոր անձինք պատասխանատու են ֆինանսական հաշվետվողականության գործընթացի վերահսկման համար:

Աուդիտորի պատասխանատվությունը ֆինանսական հաշվետվությունների աուդիտի համար

Մեր նպատակն է ձեռք բերել ողջամիտ հավաստիացում առ այն, որ ֆինանսական հաշվետվությունները բոլոր էական առումներով զերծ են էական խեղաթյուրումներից, անկախ դրանց խարդախության կամ սխալի հետևանքով առաջացման հանգամանքից, և ներկայացնել մեր կարծիքը ներառող աուդիտորական եզրակացություն:

Ողջամիտ հավաստիացումը բարձր մակարդակի հավաստիացում է, բայց այն չի երաշխավորում, որ ԱՄՍ-ներին համապատասխան իրականացված աուդիտը միշտ կհայտնաբերի էական խեղաթյուրումը, երբ այն առկա է: Խեղաթյուրումները կարող են առաջանալ սխալի կամ խարդախության արդյունքում, և համարվում են էական, երբ խելամտորեն կարող է ակնկալվել, որ դրանք առանձին կամ միասին վերցրած, կազդեն ֆինանսական հաշվետվություններն օգտագործողների՝ այդ ֆինանսական հաշվետվությունների հիման վրա կայացվող տնտեսական որոշումների վրա:
ԱՄՍ-ների համաձայն իրականացրած աուդիտի ողջ ընթացքում կիրառում ենք մասնագիտական դատողություն և պահպանում մասնագիտական կասկածամտություն: Ի լրումն՝

- բացահայտում և գնահատում ենք խարդախության կամ սխալի հետևանքով ֆինանսական հաշվետվությունների էական խեղաթյուրման ռիսկերը, նախագծում և իրականացնում ենք աուդիտորական ընթացակարգեր՝ այդ ռիսկերին արձագանքելու նպատակով, և ձեռք ենք բերում աուդիտորական ապացույցներ, որոնք բավականաչափ և համապատասխան հիմք են հանդիսանում մեր կարծիքի համար: Խարդախության հետևանքով առաջացած էական խեղաթյուրման չհայտնաբերման ռիսկն ավելի բարձր է, քան սխալի հետևանքով էական խեղաթյուրման չհայտնաբերման ռիսկը, քանի որ խարդախությունը կարող է ներառել հանցավոր համաձայնություն, զեղծարարություն, միտումնավոր բացթողումներ, սխալ ներկայացումներ կամ ներքին հսկողության համակարգի շրջանցում.
- ձեռք ենք բերում աուդիտին վերաբերող ներքին հսկողության մասին պատկերացում՝ տվյալ հանգամանքներին համապատասխան աուդիտորական ընթացակարգեր նախագծելու, և ոչ թե Կազմակերպության ներքին հսկողության արդյունավետության վերաբերյալ կարծիք արտահայտելու համար.
- գնահատում ենք հաշվապահական հաշվառման կիրառված քաղաքականության տեղին լինելը, ինչպես նաև ղեկավարության կողմից կատարած հաշվապահական հաշվառման գնահատումների և կից բացահայտումների խելամտությունը.
- եզրահանգում ենք ղեկավարության կողմից հաշվապահական հաշվառման անընդհատության հիմունքի կիրառման տեղին լինելու վերաբերյալ, և հիմնվելով ձեռք բերված աուդիտորական ապացույցների վրա՝ գնահատում ենք՝ արդյոք առկա է էական անորոշություն դեպքերի կամ իրավիճակների վերաբերյալ, որոնք կարող են նշանակալի կասկած հարուցել Կազմակերպության անընդհատ գործելու կարողության վրա: Եթե մենք եզրահանգում ենք, որ առկա է էական անորոշություն, ապա մեզանից պահանջվում է աուդիտորական եզրակացությունում ուշադրություն հրավիրել ֆինանսական հաշվետվությունների համապատասխան բացահայտումներին, կամ, եթե այդպիսի բացահայտումները բավարար չեն, ձևափոխել մեր կարծիքը:
  Մեր եզրահանգումները հիմնված են մինչև մեր եզրակացության ամսաթիվը ձեռք բերված աուդիտորական ապացույցների վրա: Սակայն, ապագա դեպքերը կամ իրավիճակները կարող են ստիպել Կազմակերպությանը դադարեցնել անընդհատության հիմունքի կիրառումը:
- գնահատում ենք ֆինանսական հաշվետվությունների ընդհանուր ներկայացումը, կառուցվածքը և բովանդակությունը, ներառյալ բացահայտումները՝ ինչպես նաև ֆինանսական հաշվետվությունների հիմքում ընկած գործարքների և դեպքերի ճշմարիտ ներկայացումը:

Կառավարման լիազոր անձանց, ի թիվս այլ հարցերի, հաղորդակցում ենք աուդիտի առաջադրանքի պլանավորված շրջանակի և ժամկետների, ինչպես նաև աուդիտի ընթացքում հայտնաբերված նշանակալի հարցերի, ներառյալ՝ ներքին հսկողությանը վերաբերող նշանակալի թերությունների մասին:

«Աուդիտ Արմենիա» ՓԲԸ
11 ապրիլի, 2024թ.
Ք. Երևան

Աննա Ավետիսյան

Տնօրեն-Բաժնետեր
Աուդիտի ղեկավար

Հազար դրամ	Ծանոթ.	2023թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	2022թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ
Ակտիվներ			
Ընթացիկ ակտիվներ			
Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ	4	15,496	88,917
Դեբիտորական պարտքեր ֆուտբոլիստների տրանսֆերների գծով		-	-
Դեբիտորական պարտքեր խմբի կամ կապակցված կողմերի գծով		-	-
Այլ դեբիտորական պարտքեր		-	-
Տրված կանխավճարներ	5	4,203	2,859
Տրված փոխառություններ կապակցված կողմերին	6	2,621,184	2,319,244
Ընթացիկ հարկային ակտիվներ		-	-
Պաշարներ		-	-
Այլ ընթացիկ ակտիվներ		-	-
		2,640,883	2,411,020
Ոչ ընթացիկ ակտիվներ			
Հիմնական միջոցներ	7	3,277	354
Ոչ նյութական ակտիվներ - խաղացողներ		-	-
Ոչ նյութական ակտիվներ – այլ		-	-
Դեբիտորական պարտքեր խաղացողների տրանսֆերների գծով		-	-
Դեբիտորական պարտքեր խմբի/կապակցված կողմերի գծով		-	-
Դեբիտորական պարտքեր (այլ)		-	-
Հետաձգված հարկային ակտիվներ		-	-
Ներդրումներ		-	-
		3,277	354
Ընդամենը ակտիվներ		2,644,160	2,411,374
Ընթացիկ պարտավորություններ			
Բանկային օվերդրաֆտներ		-	-
Բանկային և այլ վարկեր		-	-
Խմբից կամ կապակցված կողմերից ստացված փոխառություններ		-	-
Կրեդիտորական պարտքեր խաղացողների տրանսֆերների գծով	8	-	-
Կրեդիտորական պարտքեր խաղացողների իմիջային իրավունքների գծով	8	-	18,300
Կրեդիտորական պարտքեր աշխատավարձի և այլ հատուցումների գծով	8	5,151	919
Կրեդիտորական պարտքեր սոցապ/հարկային վճարների գծով	8	1,712	175
Կրեդիտորական պարտքեր այլ հարկերի գծով	8	-	-
Կրեդիտորական պարտքեր շահութահարկի գծով		-	-

Հազար դրամ	Ծանոթ.	2023թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	2022թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ
Ստացված կանխավճարներ և հետաձգված եկամուտ	8	4,487	-
Եկամուտներին վերաբերող շնորհ	10	-	-
Այլ կրեդիտորական պարտքեր	8	4,443	-
Ընթացիկ պահուստներ	9	-	2,654
Այլ կարճաժամկետ պարտավորություններ		-	-
		15,793	22,048
Ոչ ընթացիկ պարտավորություններ			
Բանկային և այլ վարկեր		-	-
Կապակցված կողմերից ստացված փոխառություններ		-	-
Կրեդիտորական պարտքեր խմբին/կապակցված կողմերին		-	-
Կրեդիտորական պարտքեր վարձակալության գծով կապակցված կողմերին		-	-
Կրեդիտորական պարտքեր խաղացողների տրանսֆերների գծով		-	-
Կրեդիտորական պարտքեր աշխատավարձի և այլ հատուցումների գծով		-	-
Կրեդիտորական պարտքեր հարկերի և այլ պարտադիր վճարների գծով		-	-
Այլ հարկային պարտավորություններ		-	-
Այլ կրեդիտորական պարտքեր		-	-
Կանխավճարներ և հետաձգված եկամուտ		-	-
Հետաձգված հարկային պարտավորություններ		-	-
Ակտիվներին վերաբերող շնորհներ	10	3,321	-
Երկարաժամկետ պահուստներ		-	-
Այլ ոչ ընթացիկ պարտավորություններ		-	-
		3,321	
Ընդամենը պարտավորություններ		19,114	22,048
Զուտ ակտիվներ			
Կուտակված արդյունք		2,625,046	2,389,326
		2,625,046	2,389,326
Ընդամենը զուտ ակտիվներ և պարտավորություններ		2,644,160	2,411,374

Ֆինանսական հաշվետվությունները հաստատվել և ստորագրվել են Կազմակերպության ղեկավարության կողմից 2024թ. ապրիլի 11-ին՝

Գործադիր տնօրեն
Լիպարիտ Նավոյան

Ֆինանսական հարցերով
պատասխանատու
Մելսիդա Ղարիբյան

Ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրությունները կազմում են ֆինանսական հաշվետվությունների բաղկացուցիչ մասը։

Հազար դրամ	Ծանոթ.	2023թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա	2022թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա
Հասույթ			
Տոմսերի իրացում		-	-
Հովանավորչություն և գովազդ		7,584	37,845
Հեռարձակման իրավունքներ		-	1,864
Առևտրական		-	-
ՈՒԵՖԱ-ի համերաշխության և մրցանակային գումարներ		273,380	304,537
Աջակցություն ՈՒԵՖԱ-ից		-	-
Ֆուտբոլի ազգային մարմնից դրամաշնորհներ, նվիրատվություններ		17,000	7,500
Այլ գործառնական եկամուտներ		4,259	509
Ընդամենը հասույթ		302,223	352,255
Ծախսեր			
Վաճառված ապրանքների ինքնարժեք		-	-
Խաղացողներին վճարվող աշխատավարձ և այլ եկամուտներ		(71,629)	(66,551)
Աշխատավարձի գծով ծախսեր (այլ աշխատակիցներ)		(35,015)	(27,500)
Հիմնական միջոցների մաշվածություն		(1,212)	(105)
Ոչ նյութական ակտիվների ամորտիզացիա (բացառությամբ խաղացողների գրանցման հետ կապված ծախսերի)		-	-
Այլ գործառնական ծախսեր	11	(125,810)	(87,041)
Ընդամենը գործառնական ծախսեր (բացառությամբ խաղացողների գրանցման հետ կապված ծախսերի)		(233,666)	(181,197)
Գործառնական գործունեությունից շահույթ		68,557	171,058
Խաղացողների գրանցման ձեռքբերում և օտարում			
Ոչ նյութական ակտիվների ամորտիզացիա		-	-
(խաղացողների գրանցում)		-	-
Ոչ նյութական ակտիվների արժեզրկում		-	-
(խաղացողների գրանցում)		-	-
Գրանցման ձեռքբերմանն ուղղված ծախսեր (ներառյալ չկապիտալացված վճարներ գործակալներին/միջնորդներին և խաղացողների վարձակալության վճարներ)		(3,830)	(2,440)
Խաղացողների գրանցման օտարումներից եկամուտներ (ներառյալ վարձակալությունից եկամուտ)		2,895	755
Ընդամենը խաղացողների գրանցման ձեռքբերում և օտարում		(935)	(1,685)
Հիմնական միջոցների օտարումից օգուտ/վնաս		-	-

Հազար դրամ	Ծանոթ.	2023թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա	2022թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա
Ոչ նյութական ակտիվների օտարումից օգուտ/վնաս		-	-
Ընդամենը ոչ ընթացիկ ակտիվների օտարումից օգուտ/վնաս		-	-
Ֆինանսական եկամուտ		-	-
Ֆինանսական ծախս		-	-
Զուտ օգուտ/վնաս փոխարժեքային տարբերությունից	12	168,098	(658,475)
Զուտ ֆինանսական եկամուտ		168,098	(658,475)
Այլ ոչ գործառնական եկամուտներ			-
Այլ ոչ գործառնական ծախսեր		-	(688)
Այլ ոչ գործառնական գործունեության արդյունք			(688)
Շահույթ/վնաս մինչև հարկերը		235,720	(489,790)
Շահութահարկ		-	-
Տարվա շահույթ/վնաս		235,720	(489,790)
Այլ համապարփակ ֆինանսական արդյունքներ			-
Տարվա այլ համապարփակ ֆինանսական արդյունքներ հարկումից հետո			-
Ընդամենը համապարփակ ֆինանսական արդյունքներ		235,720	(489,790)

Ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրությունները կազմում են ֆինանսական հաշվետվությունների բաղկացուցիչ մասը:

Հազար դրամ	Չբաշխված շահույթ	Ընդամենը
2022թ հունվարի 1-ի դրությամբ	2,879,116	2,879,116
Տարվա վնաս	(489,790)	(489,790)
Ընդամենը տարվա համապարփակ ֆինանսական արդյունք	(489,790)	(489,790)
2022 դեկտեմբերի 31-ի դրությամբ	2,389,326	2,389,326
Տարվա շահույթ	235,720	235,720
Ընդամենը տարվա համապարփակ ֆինանսական արդյունք	235,720	235,720
2023թ դեկտեմբերի 31-ի դրությամբ	2,625,046	2,625,046

Հազար դրամ	2023թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի	2022թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի
Գործառնական գործունեությունից դրամական միջոցների հոսքեր		
Տարվա արդյունք	235,720	(489,790)
Ճշգրտումներ		
Շահութահարկի գծով ծախս		-
Մաշվածության ծախս	1,212	105
Շնորհից եկամուտ	(814)	(435)
Ֆինանսական եկամուտ		-
Ֆինանսական ծախս		-
Այլ ֆինանսական հոդվածներ, զուտ	(168,098)	658,475
Գործառնական վնաս նախքան շրջանառու կապիտալի փոփոխություններ	68,020	168,355
Պաշարների փոփոխություն		-
Դեբիտորական պարտքերի փոփոխություն	(4,239)	(2,992)
Առևտրային և այլ կրեդիտորական պարտքերի փոփոխություն	(2,365)	(23,825)
Գործառնական գործունեությունից ստացված դրամական միջոցներ	61,416	141,538
Վճարված շահութահարկ	-	-
Վճարված տոկոս	-	-
Գործառնական գործունեության համար օգտագործված զուտ դրամական միջոցներ	61,416	141,538
Ներդրումային գործունեությունից դրամական միջոցների հոսքեր		
Դրամական միջոցներ խաղացողների գրանցման օտարումից	2,895	755
Վճարումներ խաղացողների գրանցումներ ձեռք բերելու նպատակով	(3,830)	(2,440)
Տրված փոխառություններ կապակցված կողմերին	(136,253)	(400,683)
Հիմնական միջոցների և ոչ նյութական ակտիվների ձեռքբերում. օտարում		-
Ստացված տոկոս	-	-
Ներդրումային գործունեությունից ստացված զուտ դրամական միջոցներ	(137,188)	(402,368)
Ֆինանսական գործունեությունից դրամական միջոցների հոսքեր		
Շնորհի ստացում		435
Փոխառություններից մուտքեր		-
Ֆինանսական գործունեությունից ստացված զուտ դրամական միջոցներ		435
Դրամական միջոցների և դրանց համարժեքների զուտ աճ	(75,772)	(260,395)
Արտարժույթի փոխարժեքի ազդեցությունը դրամական միջոցների վրա	2,351	(116,549)
Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ ժամանակաշրջանի սկզբում	88,917	465,861
Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ տարվա վերջում	15,496	88,917

Ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրությունները կազմում են ֆինանսական հաշվետվությունների բաղկացուցիչ մասը:

1 Գործառնությունների բնույթը և ընդհանուր տեղեկատվություն

«Ալաշկերտ» ֆուտբոլային ակումբ հասարակական կազմակերպությունը (այսուհետ «ՀԿ» կամ Կազմակերպություն) ՀՀ քաղաքացիների, օտարերկրյա պետությունների քաղաքացիների, քաղաքացիություն չունեցող անձանց և իրավաբանական անձանց հասարակական միավորման տեսակ է, որն ունի ոչ առևտրային կազմակերպության կարգավիճակ: Կազմակերպությունը Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով իրավաբանական անձանց պետական ռեգիստրում գրանցվել է 2011թ. դեկտեմբերի 27-ին: Կազմակերպության գրանցման համարն է 211.171.57441:
Կազմակերպության կանոնադրական նպատակներն են՝

- Նպաստել ֆուտբոլի զարգացմանը և մասսայականացմանը ՀՀ-ում,
- Մասնակցել ՀՀ-ում ֆուտբոլ մարզաձևում կազմակերպվող և անցկացվող սիրողական և/կամ պրոֆեսիոնալ առաջնություններին.
- Նպաստել առողջ ապրելակերպին,
- Օժանդակել մարզիկների սոցիալական ապահովությանը և առողջության պահպանմանն ու զարգացմանը,
- Միջոցներ ձեռնարկել ֆուտբոլիստներին սպորտային ռեժիմով սնվելու հնարավորությունը ապահովելու ուղղությամբ,
- Կապեր հաստատել ինչպես ՀՀ, այնպես էլ օտարերկրյա այլ մարզադպրոցների և/կամ ֆուտբոլային ակումբների հետ,
- Կազմակերպել սիրողական ֆուտբոլի առաջնություններ,
- Միջոցներ ձեռնարկել ֆուտբոլ մարզաձևի Հայաստանի Ազգային Հավաքականի համար սաներ նախապատրաստելու ուղղությամբ.
- Նպաստել երեխաների ֆուտբոլային կրթության մակարդակի բարձրացմանը,
- Նպաստել մարզչական գործունեության մասնագիտական մակարդակի բարձրացմանը,
- ՀՀ տարբեր շրջաններում նպաստել ֆուտբոլով զբաղվող երեխաներին բարեկեցիկ մարզական պայմանների ապահովմանը,
- Նպաստել ՀՀ-ում պրոֆեսիոնալ ֆուտբոլի տեսական և գործնական կառավարման մակարդակի բարելավմանը,
- Կազմակերպել և անցկացնել ուսումնամարզական հավաքներ:

Կազմակերպության կառավարման մարմիններն են ընդհանուր ժողովը և գործադիր մարմինը՝ գլխավոր տնօրենը: Կազմակերպության հերթական Ժողովը գումարվում է հինգ տարին մեկ անգամ: Գլխավոր տնօրենը որոշում է Ժողովի անցկացման օրը, ժամը և տեղը:

2023թ. Կազմակերպության աշխատակիցների միջին թվաքանակը կազմել է 71 մարդ (2022թ.՝ 95 մարդ):

Կազմակերպության հասցեն է՝ Հայաստանի Հանրապետություն, ք. Երևան, Դավթաշեն 2 թաղ., 26շ, բն 29

2 Պատրաստման հիմքերը

2.1 Համապատասխանություն

Ֆինանսական հաշվետվությունները պատրաստվել են ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտներին (ՖՀՄՍ) համաձայն, ինչպես հրապարակվել է Հաշվապահական Հաշվառման Միջազգային Ստանդարտների Խորհրդի (ՀՀՄՍԽ) կողմից:
ՖՀՄՍ-ները ներկայումս չեն պարունակում ոչ առևտրային կազմակերպությունների հաշվապահական հաշվառման և ֆինանսական հաշվետվությունների վերաբերյալ հատուկ ուղեցույցներ: Եթե ՖՀՄՍ-ն ուղղորդում չի տրամադրում շահույթ չհետապնդող կազմակերպություններին կոնկրետ գործարքների հաշվառման վերաբերյալ, հաշվապահական հաշվառման քաղաքականությունը պետք է հիմնված լինի ՖՀՄՍ-ի ընդհանուր սկզբունքների վրա՝ համաձայն Հաշվապահական Հաշվառման Միջազգային

Ստանդարտների Խորհրդի (ՀՀՄՍԽ) հրապարակած «Ֆինանսական հաշվետվությունների պատրաստման և ներկայացման հայեցակարգային հիմունքների»:

2.2 Ճանաչման հիմքեր

Ֆինանսական հաշվետվությունները պատրաստվել են սկզբնական արժեքի սկզբունքով:

2.3 Գործառնական և ներկայացման արժույթ

Հայաստանի Հանրապետության ազգային արժույթը հայկական դրամն է (դրամ), որն էլ հանդիսանում է Կազմակերպության գործառնական արժույթը, քանի որ այն լավագույնս արտացոլում է ֆինանսական հաշվետվությունների հիմքում ընկած իրադարձությունների և Կազմակերպության գործարքների տնտեսական բովանդակությունը:

Սույն ֆինանսական հաշվետվությունները ներկայացված են հայկական դրամով, քանի որ ղեկավարության համոզմամբ այս արժույթն առավել օգտակար է Կազմակերպության ֆինանսական հաշվետվություններն օգտագործողների համար: Դրամով ներկայացված ամբողջ ֆինանսական տեղեկատվությունը կլորացված է մինչև մոտակա հազար միավորը:

2.4 Գնահատումների և դատողությունների կիրառում

ՖՀՄՍ-ին համապատասխան ֆինանսական հաշվետվությունների պատրաստումը պահանջում է, որպեսզի Կազմակերպության ղեկավարությունը կարևոր գնահատումներ և ենթադրություններ կատարի, որոնք ազդեցություն են գործում ֆինանսական հաշվետվությունների ամսաթվի դրությամբ ակտիվների և պարտավորությունների գումարների, ինչպես նաև հաշվետու տարվա եկամուտների և ծախսերի գումարների վրա:
Նշանակալի ոլորտները, որոնք ներառում են ավելի բարձր աստիճանի դատողություն, որտեղ ենթադրություններն ու գնահատումները կարևոր են ֆինանսական հաշվետվությունների համար, բացահայտվում են ֆինանսական հաշվետվությունների կից ծանոթագրություններում:

2.5 Ֆինանսական հաշվետվությունների կազմը

Ֆինանսական հաշվետվություններում ներառված են՝

ա) ֆինանսական վիճակի մասին հաշվետվություն՝ ժամանակաշրջանի վերջի դրությամբ: Ընթացիկ և ոչ ընթացիկ ակտիվներն ու պարտավորությունները ներկայացվում են առանձին դասակարգմամբ.
բ) ֆինանսական արդյունքի մասին մեկ հաշվետվություն՝ տվյալ ժամանակաշրջանի համար: Կազմակերպությունը ներկայացնում է շահույթում կամ վնասում ճանաչված ծախսերի բաժանումը (վերլուծումը)՝ օգտագործելով դրանց բնույթի վրա հիմնված դասակարգումը.
գ) զուտ ակտիվներում փոփոխությունների մասին հաշվետվություն՝ տվյալ ժամանակաշրջանի համար.
դ) դրամական հոսքերի մասին հաշվետվություն՝ տվյալ ժամանակաշրջանի համար: Գործառնական գործունեությունից առաջացող դրամական հոսքերի մասին տեղեկատվությունը ներկայացվում է՝ օգտագործելով անուղղակի մեթոդը: Վճարված տոկոսները դասակարգվում են որպես գործառնական, ստացված տոկոսներն ու շահաբաժինները՝ որպես ներդրումային գործունեությունից առաջացող դրամական հոսքեր: Վճարված հարկերը դասակարգվում են որպես գործառնական գործունեությունից առաջացող դրամական հոսքեր:
ե) ծանոթագրություններ, որոնք բաղկացած են հաշվապահական հաշվառման քաղաքականության նշանակալի մասերի համառոտ նկարագրից և այլ բացատրական տեղեկատվությունից.
Ֆինանսական հաշվետվություններում բացահայտվում է ընթացիկ ժամանակաշրջանի ֆինանսական հաշվետվություններում ներկայացված բոլոր գումարների՝ նախորդ ժամանակաշրջանի (նախորդ տարի) համադրելի տեղեկատվությունը: Երբ Կազմակերպությունը իր ֆինանսական հաշվետվություններում փոփոխում է հոդվածների ներկայացումը կամ դասակարգումը, ապա վերադասակարգում է համադրելի գումարները, բացի այն դեպքերից, երբ վերադասակարգումն անիրագործելի է:

2.6 Նոր և վերանայված ՖՀՄՍ ստանդարտներ

Նոր և վերանայված ստանդարտներ և մեկնաբանություններ, որոնք կիրառելի են հաշվետու ժամանակաշրջանում և դրանից հետո սկսվող տարեկան ժամանակաշրջանների համար

ՖՀՄՍ 3 «Ձեռնարկատիրական գործունեության միավորումներ». Ձեռնարկատիրական գործունեության սահմանումը

ՖՀՄՍ 3-ում կատարվել է ձեռնարկատիրական գործունեության սահմանման խմբագրում, համաձայն որի նախ պարզաբանվել է, որ ձեռնարկատիրական գործունեությունը պետք է անպայման ունենա մուտքեր (մուտքային գործոններ), գործընթաց, որը պետք է լինի նշանակալի, և մուտքերն ու գործընթացը միասին պետք է ապահովեն արդյունք: Նաև պարզաբանվել է, որ ձեռնարկատիրական գործունեության արդյունքը արտահայտվում է հաճախորդներին ծառայություն կամ ապրանք մատակարարելով, կամ սովորական գործունեությունից այլ եկամուտների տեսքով:

ՀՀՄՍ 1 «Ֆինանսական հաշվետվությունների ներկայացումը» և ՀՀՄՍ 8 «Հաշվապահական հաշվառման քաղաքականություն, փոփոխություններ հաշվապահական հաշվառման գնահատումներում և սխալներ». Էականության սահմանումը

ՀՀՄՍ 1-ում և ՀՀՄՍ 8-ում տեղի է ունեցել էականության սահմանման խմբագրում, ըստ որի տեղեկատվությունը համարվում է էական, եթե կա ողջամիտ ակնկալիք, որ դրա բացթողումը, ոչ ճիշտ ներկայացումը կամ միավորման արդյունքում աննկատ ներկայացումը կազդի հաշվետվությունների հիմնական օգտագործողների կողմից կայացվող որոշումների վրա:

Ֆինանսական հաշվետվությունների վերանայված Հայեցակարգային Հիմունքներ

Հաշվապահական Հաշվառման Միջազգային Ստանդարտների Խորհուրդը թողարկել է վերանայված Հայեցակարգային Հիմունքները, որն օգտագործելու է ստանդարտներ սահմանելիս որոշումների կայացման գործում: Հիմնական փոփոխությունները հետևյալի վերաբերյալ են.

- ֆինանսական հաշվետվությունների նպատակի սահմանում
- օգտակար ֆինանսական տեղեկատվության որակական բնութագրեր
- հաշվետու կազմակերպության սահմանում
- ակտիվի, պարտավորության, սեփական կապիտալի, եկամտի և ծախսերի սահմանումներ
- ֆինանսական հաշվետվություններում ակտիվների և պարտավորությունների ճանաչման չափանիշների և դրանց ապաճանաչման ուղեցույցի ավելացում
- ուղեցույցի ավելացում տարբեր չափման հիմունքների համար, և
- սահմանում, որ շահույթը կամ վնասը կատարողականի հիմնական ցուցանիշն է, և, որ, սկզբունքորեն, այլ համապարփակ արդյունքի եկամուտներն ու ծախսերը պետք է վերադասակարգվեն, երբ դա նպաստում է ֆինանսական հաշվետվությունների տեղին կամ արժանահավատ ներկայացմանը:

3 Հաշվապահական հաշվառման քաղաքականություն

3.1 Արտարժույթ

Արտարժույթով գործարքներ

Ֆինանսական հաշվետվություններ պատրաստելիս Կազմակերպության համար գործառնական արժույթից տարբեր այլ արժույթով իրականացված գործարքները գրանցվում են գործարքի օրվա դրությամբ Հայաստանի Հանրապետության Կենտրոնական բանկի (ՀՀ ԿԲ) կողմից հրապարակված միջին փոխարժեքով: Յուրաքանչյուր հաշվետու ամսաթվի դրությամբ արտարժույթով դրամային հոդվածները պետք է վերահաշվարկվեն՝ կիրառելով հաշվետու ամսաթվի դրությամբ ՀՀ ԿԲ կողմից հրապարակված միջին փոխարժեքը: Իրական արժեքով հաշվառվող և արտարժույթով սահմանված ոչ դրամային հոդվածները վերահաշվարկվում են գործարքի օրվա դրությամբ գործող միջին փոխարժեքով: Ոչ դրամային հոդվածները, որոնց սկզբնական արժեքը հաշվառվում է արտարժույթով, չեն վերահաշվարկվում: Ստորև ներկայացված են ՀՀ Կենտրոնական բանկի կողմից հրապարակված միջին փոխարժեքները.

	2023թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	2022թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ
Ռուբլի	4.50	5,59
ԱՄՆ դոլար	404.79	393,57
Եվրո	447.90	420.06

Արտարժույթով գործարքներից, ինչպես նաև արտարժույթով արտահայտված դրամային հոդվածների վերահաշվարկումից առաջացած փոխարժեքային տարբերությունները ճանաչվում են ժամանակաշրջանի շահույթում կամ վնասում:

3.2 Հիմնական միջոցներ

Հիմնական միջոցները հաշվառվում են սկզբնական արժեքով՝ հանած կուտակված մաշվածությունը և արժեզրկումից կորուստները: Սկզբնական արժեքը ներառում է ձեռքբերման գինը, ներկրման տուրքերը, հարկերը, որոնք ենթակա չեն վերադարձման և ուղղակիորեն վերագրվող ծախսումներ: Հիմնական միջոցների օտարման կամ դուրսգրման հետևանքով առաջացած օգուտը կամ վնասը որոշվում է վաճառքից հասույթի և ակտիվի հաշվեկշռային արժեքի տարբերությամբ և ճանաչվում է շահույթում կամ վնասում:

Հիմնական միջոցների՝ որպես առանձին ակտիվ հաշվառվող միավորի բաղկացուցչի փոխարինման ծախսումները կապիտալացվում են դուրս գրված բաղկացուցչի հաշվեկշռային արժեքի հետ: Այլ հետագա ծախսումները կապիտալացվում են միայն այն ժամանակ, երբ դրանք ավելացնում են հիմնական միջոցի միավորի հետ կապված ապագա տնտեսական օգուտները: Բոլոր այլ ծախսումները, ներառյալ պահպանման և վերանորոգման ծախսումները, ճանաչվում են շահույթի կամ վնասի և այլ համապարփակ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում՝ կատարվելու ժամանակաշրջանում:

Մաշվածությունը ճանաչվում է շահույթի կամ վնասի և այլ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում՝ կիրառելով գծային մեթոդը հիմնական միջոցի օգտակար ծառայության գնահատված ժամկետի ընթացքում: Մաշվածության հաշվարկը սկսվում է այն պահից, երբ ակտիվը դառնում է մատչելի՝ իր նպատակային նշանակությամբ օգտագործելու համար: Հիմնական միջոցների գնահատված օգտակար ծառայության ժամկետները ներկայացված են ստորև.

Մեքենաներ և սարքավորումներ	5 տարի,
Արտադրական և տնտեսական գույք	5 տարի:

3.3 Հիմնական միջոցների արժեզրկում

Մաշվող ակտիվները արժեզրկման համար վերանայվում են, երբ իրադարձությունները և հանգամանքների փոփոխությունները վկայում են այն մասին, որ դրանց հաշվեկշռային արժեքը կարող է չվերականգնվել: Արժեզրկման կորուստը ճանաչվում է այն գումարով, որով ակտիվի հաշվեկշռային արժեքը գերազանցում է փոխհատուցվող գումարը:

Փոխհատուցվող գումարը վաճառքի զուտ գնից և օգտագործման արժեքից առավելագույնն է: Եթե ակտիվի կամ դրամաստեղծ միավորի փոխհատուցվող գումարն ավելի փոքր է նրա հաշվեկշռային արժեքից, ապա ակտիվի կամ դրամաստեղծ միավորի հաշվեկշռային արժեքը նվազեցվում է մինչև փոխհատուցվող գումարը:

Երբ հետագայում արժեզրկումից կորուստը հակադարձվում է, ապա ակտիվի կամ դրամաստեղծ միավորի հաշվեկշռային արժեքը պետք է ավելացվի մինչև նրա փոխհատուցվող գումարը, բայց այնպես, որ ակտիվի ավելացված հաշվեկշռային արժեքը չգերազանցի այն հաշվեկշռային արժեքը, որը որոշված կլինի, եթե նախորդ տարիներին այդ ակտիվի կամ դրամաստեղծ միավորի գծով արժեզրկումից կորուստներ ճանաչված չլինեն: Արժեզրկումից կորստի հակադարձումն անմիջապես ճանաչվում է որպես եկամուտ համապարփակ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում, բացառությամբ այն դեպքերի, երբ համապատասխան ակտիվը հաշվառվում է վերագնահատված արժեքով, որի դեպքում արժեզրկումից կորստի ցանկացած հակադարձում դիտվում է որպես վերագնահատումից արժեքի աճ:

3.4 Ոչ նյութական ակտիվներ

Ոչ նյութական ակտիվները սահմանվում են սկզբնական արժեքով՝ հանած կուտակված մաշվածությունը և արժեզրկումից կորուստները: Դրանք ամորտիզացվում են իրենց օգտակար ծառայության ընթացքում՝ կիրառելով ուղղագծային մեթոդը: Եթե կա որևէ հայտանիշ, որ տեղի է ունեցել ոչ նյութական ակտիվի ամորտիզացիայի դրույքաչափի, օգտակար ծառայության կամ մնացորդային արժեքի էական փոփոխություն, ապա ամորտիզացիան պետք է վերանայվի այնպես, որ արտացոլի նոր ակնկալիքները:

Կազմակերպությունը ֆուտբոլիստների գրանցմանն ուղղված ծախսերը ծախսագրում է ընթացիկ տարվա ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում:

3.5 Վարձակալություն

Կազմակերպությունը, որպես վարձակալ, մեկնարկի ամսաթվի դրությամբ ճանաչում է օգտագործման իրավունքով ակտիվ և վարձակալության գծով պարտավորություն, բացառությամբ փոքրարժեք ակտիվների և վարձակալության գծով կարճաժամկետ պարտավորությունների, համաձայն ՖՀՄՍ 16-ի:

Սկզբնական ճանաչում

Վարձակալության մեկնարկի ամսաթվին Կազմակերպությունը չափում է օգտագործման իրավունքով ակտիվը սկզբնական արժեքով, որը ներառում է.

- վարձակալության պարտավորության գծով սկզբնական չափման գումարը,
- վարձակալության մեկնարկի ամսաթվին կամ դրանից առաջ կատարված վարձավճարները՝ հանած ստացված ցանկացած վարձակալության խրախուսումներ,
- վարձակալի կողմից կրած սկզբնավորման ցանկացած ուղղակի ծախսումներ,և
- այն ծախսումների գնահատականը, որը վարձակալը կկրի հիմքում ընկած ակտիվը ապամոնտաժելիս կամ քանդելիս, ինչպես նաև այդ ակտիվի զբաղեցրած տեղանքը վերականգնելիս կամ հիմքում ընկած ակտիվը վերականգնելիս՝ բերելով այն վիճակի, որը պահանջվում է վարձակալության պայմանագրի ժամկետներով և պայմաններով:

Վարձակալության մեկնարկի ամսաթվին Կազմակերպությունը պետք է չափի վարձակալության գծով պարտավորությունը՝ այն վարձավճարների ներկա արժեքով, որոնք դեռևս չեն վճարվում այդ ամսաթվին: Վարձավճարները պետք է զեղչվեն՝ կիրառելով Կազմակերպության վարձակալությամբ ենթադրվող տոկոսադրույքը, եթե այդ դրույքը կարելի է հեշտությամբ որոշել: Եթե այդ դրույքը հնարավոր չէ հեշտությամբ որոշել, Կազմակերպությունը պետք է կիրառի վարձակալի լրացուցիչ փոխառության տոկոսադրույքը:

Հետագա չափում

Սկզբնական արժեքի մոդել կիրառելիս կազմակերպությունը պետք է չափի օգտագործման իրավունքի ձևով ակտիվը սկզբնական արժեքով՝

- հանած՝ կուտակված մաշվածությունը և արժեզրկումից կուտակված կորուստները և
- ճշգրտված՝ վարձակալության գծով պարտավորության ցանկացած վերաչափմամբ:

Մեկնարկի ամսաթվից հետո վարձակալը վարձակալության գծով պարտավորությունը պետք է չափի՝

- ավելացնելով հաշվեկշռային արժեքը՝ վարձակալության գծով պարտավորության տոկոսը արտացոլելու համար,
- նվազեցնելով հաշվեկշռային արժեքը՝ կատարված վարձավճարները արտացոլելու համար, և
- վերաչափելով հաշվեկշռային արժեքը՝ ցանկացած վերանայում կամ վարձակալության վերափոխում, կամ վերանայված հաստատուն վարձավճարները արտացոլելու համար:

3.6 Պաշարներ

Պաշարները հաշվառվում են ինքնարժեքից և իրացման զուտ արժեքից նվազագույնով: Իրացման զուտ արժեքը սովորական գործունեության ընթացքում վաճառքի ձևավորվող գինն է՝ հանած համալրման և վաճառքը կազմակերպելու համար անհրաժեշտ ծախսումները: Պաշարների ինքնարժեքը ներառում է պաշարների ձեռքբերման, ինչպես նաև դրանք իրենց ներկայիս վիճակին և գտնվելու վայր հասցնելու ծախսերը:

Իրացման զուտ արժեքը վաճառքի ենթադրվող գինն է՝ հանած համալրման (վերանորոգման) ենթադրվող ծախսումները, ինչպես նաև վաճառքի կազմակերպման համար անհրաժեշտ ենթադրվող ծախսումները: Իրացման զուտ արժեքի գնահատումները հիմնվում են պաշարների իրացումից սպասվելիք գումարի՝ գնահատման պահին հասանելի առավել արժանահավատ վկայության վրա:Այդ գնահատումները կատարելիս հաշվի են առնվում հաշվետու ժամանակաշրջանի ավարտից հետո տեղի ունեցած դեպքերի հետ ուղղակիորեն կապված գների կամ ծախսումների տատանումներն այնքանով, որքանով նման դեպքերը հաստատում են ժամանակաշրջանի վերջի դրությամբ առկա պայմանները:

3.7 Շնորհներ

Շնորհները, ներառյալ ոչ դրամային շնորհները՝ ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում ներկայացվում են իրական արժեքով որպես հետաձգված եկամուտ:
Շնորհը ճանաչվում է որպես եկամուտ՝ սիստեմատիկ եւ ռացիոնալ հիմունքով, ակտիվի օգտակար ծառայության ընթացքում:
Ոչ ընթացիկ ակտիվների ձեռքբերմանը վերաբերող շնորհները ներառվում են ոչ ընթացիկ պարտավորություններում եւ ճանաչվում են որպես եկամուտ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում գծային մեթոդով՝ համապատասխան ակտիվի օգտակար ծառայության ընթացքում:

3.8 Պահուստ

Կազմակերպությունը պահուստը պետք է ճանաչի միայն այն դեպքում, երբ
ա) կազմակերպությունը հաշվետու ամսաթվի դրությամբ ունի պարտականություն՝ որպես անցյալ դեպքերի արդյունք.
բ) հավանական է (այսինքն՝ ավելի շատ հավանական է, քան՝ ոչ), որ մարելու համար կազմակերպությունից կպահանջվի փոխանցել տնտեսական օգուտներ.
գ) պարտականության գումարը կարող է արժանահավատորեն գնահատվել:
Կազմակերպությունը պահուստը պետք է ճանաչի ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում որպես պարտավորություն, և պետք է ճանաչի պահուստի գումարը որպես ծախս:
Կազմակերպությունը պահուստը պետք է չափի հաշվետու ամսաթվի դրությամբ պարտականությունը մարելու համար պահանջվող գումարի լավագույն գնահատականով: Լավագույն գնահատականն այն գումարն է, որը կազմակերպությունը խելամտորեն կվճարեր՝ հաշվետու ժամանակաշրջանի վերջի դրությամբ այդ պարտականությունը մարելու կամ այդ պահին երրորդ կողմին փոխանցելու համար:
Կազմակերպությունը պահուստի հաշվին պետք է մարի միայն այն ծախքերը, որոնց գծով պահուստը սկզբնապես ճանաչվել էր:

3.9 Շահութահարկ

Ընթացիկ շահութահարկը տարվա համար հարկվող շահույթից վճարվելիք հարկն է՝ հաշվետու ամսաթվին գործող կամ, ըստ էության գործող հարկային դրույքաչափերով: Ընթացիկ և հետաձգված հարկերը ճանաչվում են շահույթում կամ վնասում, բացառությամբ այն դեպքերի, երբ հարկը վերաբերում է ձեռնարկատիրական գործունեության միավորմանը կամ էլ այնպիսի հոդվածի, որը ճանաչված է ուղղակիորեն սեփական կապիտալում:

3.10 Հաճախորդների հետ կնքված պայմանագրերից հասույթ

Խաղային օրերի հասույթը ճանաչվում է հաշվետու տարվա ընթացքում. յուրաքանչյուր խաղային օրվա հասույթ պետք է ճանաչվի, միայն երբ խաղային հանդիպումն արդեն իսկ կայացել է: Խաղային օրվա հասույթը, որը ստացվել է որպես կանխավճար մինչև հաշվետու տարվա ավարտը, սակայն վերաբերում է հաջորդ մրցաշրջանին (օրինակ՝ տոմսերի սեզոնային վաճառք), պետք է ձևակերպվի որպես հետաձգված եկամուտ (հասույթ) և ճանաչվի խաղային հանդիպումների կայացմանը զուգընթաց:

Հովանավորչություն և գովազդ

Հովանավորչությունն ու գովազդն ընդգրկում են ակումբի գլխավոր հովանավորին, այլ հովանավորների, մարզադաշտի եզրագծային և ցուցադրվող գովազդը, ինչպես նաև ցանկացած այլ տեսակի հովանավորչություն և գովազդային գործունեություն:

Հեռարձակման իրավունքներ

Հեռարձակման իրավունքներից հասույթն իրենից ներկայացնում է ԶԼՄ-ների հետ կնքված տնային պայմանագրերից ստացվող միջոցները: Հեռուստատեսային շուկայի ներկայացվածության հիման վրա բաշխվող, ինչպես նաև մասնակցության վճարները ճանաչվում են խաղային հանդիպումների կայացմանը զուգընթաց: Ակումբի խաղային նվաճումներից մրցանակային գումարները ճանաչվում են, երբ դրանց ստացումը դառնում է որոշակի:

Առևտրական հասույթ

Առևտրային հասույթը բաղկացած է մանրածախ իրացումներից, սնունդի և խմիչքի վաճառքից, համագումարների կազմակերպումից (ոչ խաղային օրերին), վիճակախաղերի կազմակերպումից և այլ կերպ չդասակարգված առևտրային հասույթից:

ՈՒԵՖԱ-ի համերաշխության և մրցանակային գումարներ

ՈՒԵՖԱ-ի մրցանակային գումարները ՈՒԵՖԱ ակումբային մրցաշարերին մասնակցության դիմաց ստացվող միջոցներն են: Հեռուստատեսային շուկայի ներկայացվածության հիման վրա բաշխվող, ինչպես նաև մասնակցության վճարները ճանաչվում են խաղային հանդիպումների կայացմանը զուգընթաց: Ակումբի խաղային նվաճումներից մրցանակային գումարները ճանաչվում են, երբ դրանց ստացումը դառնում է որոշակի: ՈՒԵՖԱ համերաշխության վճարները պետք է ճանաչվեն, երբ ստացելիք գումարը դառնում է որոշակի:

Այլ եկամուտներ

Այլ եկամուտներն ընդգրկում են նվիրատվությունները, դրամաշնորհները, ցանկացած տեսակի արտասովոր գործառնական եկամուտները, ինչպես նաև նախորդ հինգ խմբերում չդասակարգված այլ եկամուտներ:

3.11 Աշխատակիցներին հատուցումներ

Աշխատակիցների կարճաժամկետ հատուցումները ներառում են աշխատավարձերը, կարճաժամկետ փոխհատուցելի բացակայությունները (ինչպիսիք են, օրինակ, վճարովի տարեկան արձակուրդները և հիվանդության հետ կապված վճարովի արձակուրդները) և պարգևավճարները:

Աշխատակիցների հատուցումները աշխատակիցների, ներառյալ տնօրենները և կառավարչական անձնակազմը, մատուցած ծառայության դիմաց Կազմակերպության կողմից ցանկացած ձևով տրվող փոխհատուցումներն են: Աշխատակիցների հատուցումներն են.

ա) աշխատակիցների կարճաժամկետ հատուցումներ, որոնք աշխատակիցների հատուցումներ են (բացի ազատման նպաստներից), որոնք ամբողջությամբ մարվում են այն ժամանակաշրջանի ավարտից հետո տասներկու ամսվա ընթացքում, որում աշխատակիցները մատուցում են համապատասխան ծառայությունը.

բ) հետաշխատանքային հատուցումներ, որոնք աշխատակիցների հատուցումներ են (բացի ազատման նպաստներից), որոնք ենթակա են վճարման աշխատանքային գործունեությունն ավարտելուց հետո.
գ) աշխատակիցների այլ երկարաժամկետ հատուցումներ, որոնք աշխատակիցների հատուցումներ են (բացի հետաշխատանքային հատուցումներից և ազատման նպաստներից), որոնք ոչ ամբողջությամբ են մարվում այն ժամանակաշրջանի ավարտից հետո տասներկու ամսվա ընթացքում, որում աշխատակիցները մատուցում են համապատասխան ծառայությունը.
դ) ազատման նպաստներ, որոնք աշխատակիցների հատուցումներ են, որոնք ենթակա են վճարման որպես հետևանք կամ՝
- կազմակերպության որոշման՝ աշխատանքից ազատել աշխատակիցներին մինչև թոշակի անցնելու ընդունված ժամկետը, կամ
- աշխատակցի որոշման՝ աշխատակիցների թվաքանակի կրճատման դեպքում կամավոր ազատվել՝ փոխարենը ստանալով այդ նպաստները:

3.12 Ֆինանսական գործիքներ

Ճանաչում և ապաճանաչում

Ֆինանսական ակտիվները կամ ֆինանսական պարտավորությունները ճանաչվում են, երբ Կազմակերպությունը դառնում է ֆինանսական գործիքի պայմանագրային կողմ:

Ֆինանսական ակտիվները ապաճանաչվում են, երբ ֆինանսական ակտիվից ակնկալվող դրամական հոսքերի նկատմամբ պայմանագրային իրավունքները լրանում են, կամ երբ ֆինանսական ակտիվները և բոլոր նշանակալի ռիսկերը և հատուցումները փոխանցվում են:

Ֆինանսական պարտավորությունները ապաճանաչվում են, երբ դրանք մարվում են, ենթակա չեն վճարման, չեղյալ են ճանաչվել կամ լրացել է դրանց ուժի մեջ լինելու ժամկետը:

Ֆինանսական ակտիվների դասակարգում և սկզբնական չափում

Ֆինանսական ակտիվները բաժանվում են հետևյալ կատեգորիաների.

- ֆինանսական ակտիվներ՝ չափվող իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով,
- վաճառքի համար մատչելի ֆինանսական ակտիվներ,
- փոխառություններ և դեբիտորական պարտքեր:

Ֆինանսական ակտիվները սկզբնական ճանաչման ժամանակ վերագրվում են տարբեր կատեգորիաների՝ կախված գործիքի բնույթից և նպատակից: Ֆինանսական գործիքի կատեգորիան համապատասխանեցվում է այն սկզբունքին, որով չափվում է տվյալ գործիքը և այն հանգամանքին, թե արդյոք առաջացող եկամուտը և ծախսերը ճանաչվում են շահույթում կամ վնասում, թե ուղղակիորեն այլ համապարփակ ֆինանսական արդյունքներում:

Ֆինանսական ակտիվների հետ կապված բոլոր ծախսերը և եկամուտները որոնք ճանաչվում են շահույթում կամ վնասում, ներկայացվում են "Ֆինանսական ծախս", "Ֆինանսական եկամուտ" կամ "Այլ ֆինանսական արդյունքներ" հոդվածներում, բացառությամբ առևտրային դեբիտորական պարտքերի արժեզրկման, որը ներկայացվում է "Այլ ծախսեր" հոդվածում:

I. Ֆինանսական ակտիվներ՝ չափվող իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով

Ֆինանսական ակտիվները՝ չափվող իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով, ներառում են առևտրային նպատակով պահվող ֆինանսական ակտիվները կամ այն ֆինանսական ակտիվները, որոնք որպես չափվող իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով դասակարգվել Կազմակերպության կողմից՝ սկզբնական ճանաչման ժամանակ: Բոլոր ածանցյալ ֆինանսական գործիքները, որոնք ենթակա չեն հեջավորման, դասակարգվում են այս կատեգորիայում:

Ածանցյալ ֆինանսական գործիքների գծով առաջացած ցանկացած օգուտ կամ վնաս հիմնված է իրական արժեքի փոփոխության վրա, որը որոշվում է՝ ուղղակիորեն վկայակոչելով գործող շուկայում գործարքները կամ գործող շուկայի բացակայության դեպքում՝ գնահատման մեթոդի միջոցով:

II. Վաճառքի համար մատչելի ֆինանսական ակտիվներ

Վաճառքի համար մատչելի ֆինանսական ակտիվները չափվում են իրական արժեքով՝ իրական արժեքի փոփոխությունները ուղղակիորեն ճանաչելով այլ համապարփակ արդյունքներում: Վաճառքի համար մատչելի ֆինանսական ակտիվների կատեգորիայում դասակարգված ֆինանսական գործիքներից առաջացած օգուտը կամ վնասը ճանաչվում է շահույթում կամ վնասում այն դեպքում, երբ նշված ակտիվները վաճառվում են կամ երբ ներդրումն արժեզրկվում է: Արժեզրկման դեպքում ցանկացած վնաս, որը նախկինում ճանաչվել էր այլ համապարփակ արդյունքներում, փոխանցվում է համապարփակ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվություն: Սեփական կապիտալի գործիքներից առաջացած և համապարփակ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում ճանաչված վնասները չեն հակադարձվում համապարփակ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում, այլ ճանաչվում են սեփական կապիտալում: Նախորդ ժամանակաշրջանի համապարփակ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում ճանաչված պարտքային արժեթղթերի արժեզրկումից առաջացած վնասները հակադարձվում են համապարփակ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում, եթե հետագա աճը հիմնվում է այն դեպքի վրա, որը տեղի է ունեցել համապարփակ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում՝ արժեզրկումից վնասի ճանաչումից հետո:

III. Առևտրային և այլ դեբիտորական պարտքեր

Ընթացիկ դեբիտորական պարտքերը սկզբնապես ճանաչվում են իրական արժեքով: Հետագայում դրանք հաշվառվում են ամորտիզացված արժեքով՝ հանած արժեզրկման պահուստը: Առևտրային դեբիտորական պարտքերի արժեզրկման պահուստը ստեղծվում է այն ժամանակ, երբ առկա է օբյեկտիվ ապացույց, որ Կազմակերպությունը սկզբնապես սահմանված ժամկետներում չի կարող հավաքագրել վերադարձման ենթակա բոլոր գումարները: Դեբիտորի զգալի ֆինանսական դժվարությունները, վճարման հետաձգումը և վճարումների ուշացումները ցուցանիշ են այն բանի, որ առևտրային դեբիտորական պարտքն արժեզրկված է: Պահուստի գումարը ակտիվի հաշվեկշռային արժեքի և սկզբնական արդյունավետ տոկոսադրույքով զեղչված ապագա դրամական հոսքերի ներկա արժեքի տարբերությունն է:

Պահուստի մնացորդը ճշգրտվում է հաշվետու ժամանակաշրջանի համապարփակ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում՝ ծախսի կամ եկամտի ճանաչման միջոցով: Հաճախորդի հաշվի մնացորդից դուրս գրվող ցանկացած գումար նվազեցվում է առկա կասկածելի դեբիտորական պարտքի պահուստից: Բոլոր դեբիտորական պարտքերը, որոնց հավաքագրումը գնահատվում է անհավանական, դուրս են գրվում:

IV. Մնացորդներ դրամարկղում և բանկերում

Մնացորդները դրամարկղում և բանկերում ներառում են կանխիկ միջոցները, բանկային հաշիվների մնացորդները:

Ֆինանսական ակտիվների արժեզրկում

Յուրաքանչյուր հաշվետու ամսաթվի դրությամբ ֆինանսական ակտիվները, բացառությամբ այն ֆինանսական ակտիվների՝ չափվող իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով, գնահատվում են արժեզրկման հայտանիշի առկայության համար: Ֆինանսական ակտիվներն արժեզրկված են, եթե առկա է անկողմնակալ վկայություն, որ ֆինանսական ակտիվների սկզբնական ճանաչումից հետո տեղի ունեցած մեկ կամ մի քանի իրադարձություններ ազդել են ակնկալվող դրամական միջոցների հոսքերի վրա:

Ամորտիզացված արժեքով հաշվառվող ֆինանսական ակտիվների գծով արժեզրկման կորուստը հաշվառվում է ակտիվի հաշվեկշռային արժեքի և սկզբնական արդյունավետ տոկոսադրույքով զեղչված դրամական միջոցների ակնկալվող ապագա հոսքերի ներկա արժեքի միջև տարբերությամբ: Բոլոր ֆինանսական ակտիվների համար արժեզրկումից կորուստն ուղղակիորեն նվազեցվում է ֆինանսական ակտիվի հաշվեկշռային արժեքից, բացառությամբ առևտրային դեբիտորական պարտքերի, որոնց հաշվեկշռային արժեքը նվազեցվում է կասկածելի պարտքի պահուստի միջոցով:

Բացառությամբ վաճառքի համար մատչելի սեփական կապիտալի գործիքների, եթե հետագա ժամանակաշրջանում արժեզրկման կորուստը նվազում է և նվազումը օբյեկտիվորեն կարելի է վերագրել

արժեքի իջեցումից հետո տեղի ունեցած դեպքերին, ապա նախկինում ճանաչված արժեզրկման կորուստը հակադարձվում է՝ ճանաչվելով համապարփակ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում այն չափով, որ հակադարձումը չհանգեցնի ֆինանսական ակտիվի այնպիսի հաշվեկշռային արժեքի, որը գերազանցի այն ամորտիզացված արժեքը, որը կլիներ, եթե այդ ֆինանսական ակտիվի արժեքի իջեցման հակադարձման ամսաթվի դրությամբ արժեզրկում ճանաչված չլիներ:

Ֆինանսական պարտավորությունների դասակարգում և սկզբնական չափում

Կազմակերպության ֆինանսական պարտավորությունները ներառում են առևտրային և այլ կրեդիտորական պարտքերը, փոխառությունները:

I. Առևտրային և այլ կրեդիտորական պարտքեր

Առևտրային և այլ կրեդիտորական պարտքերը ճանաչվում են իրական արժեքով, հետագայում չափվում են ամորտիզացված արժեքով:

4 Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ

Հազար դրամ	2023թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	2022թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ
Դրամարկղ (դրամային)	579	49,745
Դրամարկղ (արտարժութային)	14,878	28,655
Բանկային հաշիվներ (արտարժութային)	37	1
Բանկային հաշիվներ (դրամային)	2	10,516
	15,496	88,917

5 Առևտրային և այլ դեբիտորական պարտքեր

Հազար դրամ	2023թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	2022թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ
Դեբիտորական պարտքեր ապրանքների վաճառքի գծով	-	-
Դեբիտորական պարտքեր մատուցված ծառայությունների գծով	-	-
Տրված կանխավճարներ	4,203	2,859
Դեբիտորական պարտքեր բյուջեի գծով	-	-
Այլ դեբիտորական պարտքեր	-	-
	4,203	2,859

6 Տրված փոխառություններ

Կապակցված կողմերին տրված՝ գրավով չապահովված փոխառություններն արտահայտված են ՀՀ դրամով, անտոկոս են և անորոշ ժամկետով:

	Ընթացիկ		Ոչ ընթացիկ	
Հազար դրամ	2023թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	2022թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	2023թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	2022թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ
Չապահովված փոխառություններ				
Փոխառություններ կապակցված կողմերին	2,621,184	2,319,244	-	-
Փոխառություններ երրորդ կողմերին	-	-	-	-
	2,621,184	2,319,244	-	-

7 Հիմնական միջոցներ

Հազար դրամ	Մեքենաներ և սարքավորումներ	Արտադրական գույք,տնտեսական գույք,գործիքներ	Ընդամենը
Սկզբնական արժեք			
2022թ. հունվարի 1-ի դրությամբ	2,679	20,506	23,185
Ավելացում, կապիտալացում	-	-	-
Օտարում, դուրսգրում	-	-	-
2022թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	2,679	20,506	23,185
Ավելացում	-	4,135	4,135
Օտարում, դուրսգրում	-	-	-
2023թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	2,679	24,641	27,320
Կուտակված մաշվածություն			
2022թ. հունվարի 1-ի դրությամբ	2,679	20,047	22,726
Տարվա ծախս	-	105	105
Օտարում	-	-	-
2022թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	2,679	20,152	22,831
Տարվա ծախս	-	1,212	1,212
Դուրսգրում	-	-	-
2023թ դեկտեմբերի 31-ի դրությամբ	2,679	21,364	24,043
Հաշվեկշռային արժեք			
2022թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	-	354	354
2023թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	-	3,277	3,277

2023թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ կազմակերպությունը հիմնական միջոցների ձեռքբերման գծով պայմանագրային պարտականություն չունի:
2023թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ հիմնական միջոցների նկատմամբ սահմանափակումներ չկան:

8 Առևտրային և այլ կրեդիտորական պարտքեր

Հազար դրամ	2023թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	2022թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ
Կրեդիտորական պարտքեր խաղացողների տրանսֆերների գծով	-	-
Կրեդիտորական պարտքեր խաղացողների իմիջային իրավունքների գծով	-	18,300
Ստացված կանխավճարներ	4,487	-
Կրեդիտորական պարտքեր աշխատավարձի գծով	5,151	919
Կրեդիտորական պարտքեր բյուջեի գծով	1,712	175
Այլ կրեդիտորական պարտքեր	4,443	-
	15,793	19,394

9 Պահուստներ

Հազար դրամ	2023թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	2022թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ
Տարեսկզբի մնացորդ	2,654	2,654
Արձակուրդի պահուստի հակադարձում. զուտ	(2,654)	-
Տարեվերջի մնացորդ՝	-	2,654
Ներառված ընթացիկ պարտավորություններում	-	2,654
Ներառված ոչ ընթացիկ պարտավորություններում	-	-

10 Ակտիվներին վերաբերող շնորհներ

Հազար դրամ	2023թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	2022թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ
Տարեսկզբի մնացորդ	-	-
Ստացված շնորհներ	4,135	-
Շնորհից եկամուտ	(814)	-
Տարեվերջի մնացորդ	3,321	-

11 Գործառնական այլ ծախսեր

Հազար դրամ	2023թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի	2022թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի
Ուսումնամարզական հավաքներ և խաղերի կազմակերպման ծախսեր	107,681	70,025
Սպորտային պարագաներ	3,470	920
Խաղերի հետ կապված տուգանքներ	5,029	709
Ֆուտբոլիստների բուժօգնության ծախսեր	1,894	2,532
Ֆուտբոլային դաշտերի վարձակալություն		-
Աուդիտորական և խորհրդատվական	3,800	4,200
Գրասենյակային, կոմունալ և ներկայացուցչական ծախսեր	25	1,391
Հեռահաղորդակցության ծախսեր	206	180
Ֆուտբոլիստների ուսման վճարներ		6,056
Բանկային ծախսեր	184	280
Այլ ծախսեր	3,521	748
	125,810	87,041

12. Այլ ֆինանսական հոդվածներ, զուտ

Հազար դրամ	2023թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի	2022թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի
Արտարժույթի փոխարժեքի ազդեցությունը		
Տրված փոխառություններ	165,687	(546,675)
Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ	2,351	(116,549)
Առևտրային և այլ դեբիտորական պարտքեր	-	-
Առևտրային և այլ կրեդիտորական պարտքեր	60	4,749
	168,098	(658,475)

13. Ֆինանսական գործիքներ

13.1 Հաշվապահական հաշվառման քաղաքականություններ

Ֆինանսական ակտիվի, ֆինանսական պարտավորության և բաժնային գործիքի յուրաքանչյուր դասի համար կիրառված հաշվապահական հաշվառման քաղաքականությունը և ընդունված մեթոդների մանրամասները, ինչպես նաև եկամտի և ծախսերի ճանաչման չափանիշներն ու հիմքերը ներկայացված են ծանոթագրություն 3.12-ում:

13.2 Ֆինանսական գործիքների կատեգորիաները

Ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում ներկայացված մնացորդները վերաբերում են ակտիվների և պարտավորությունների հետևյալ կատեգորիաներին.

Ֆինանսական ակտիվներ

Հազար դրամ	2023թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	2022թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ
Դեբիտորական պարտքեր		
Առևտրային դեբիտորական պարտքեր	-	478
Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ	15,496	88,917
Տրված փոխառություններ	2,621,184	2,319,244
	2,636,680	2,408,639

Հազար դրամ	2023թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	2022թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ
Ամորտիզացված արժեքով հաշվառվող ֆինանսական պարտավորություններ	-	-
Ստացված փոխառություններ	-	-
Առևտրային կրեդիտորական պարտքեր	-	-

14. Ֆինանսական ռիսկի կառավարման ուղղություններ

Կազմակերպությունն իր բնականոն գործունեության ընթացքում ենթարկվում է շուկայական (որը ներառում է արտարժութային), պարտքային և իրացվելիության ռիսկերի:

Ֆինանսական ռիսկի գործոններ

ա) Շուկայական ռիսկ

Կազմակերպության գործունեությունն ուղղակիորեն ենթարկվում է տոկոսադրույքային ռիսկերի փոփոխությունների ազդեցությանը և կապիտալի գնային ռիսկին:

բ) Արտարժութային ռիսկ

Կազմակերպությունը գործարքներ է իրականացնում արտարժույթով, հետևաբար ենթարկվում է արտարժույթային ռիսկին: Արտարժութի փոխարժեքային տատանումներից կախվածությունը հիմնականում առաջանում է դեբիտորական պարտքերից, տրված փոխառություններից, կրեդիտորական պարտքերից և շնորհներից:

գ) Պարտքային ռիսկ

Պարտքային ռիսկն առաջանում է այն դեպքում, երբ պայմանագրային գործընկերը չի կատարում իր պարտավորությունները, որի հետևանքով Կազմակերպությունը ֆինանսական կորուստներ կարող է կրել: Հաշվետու ամսաթվի դրությամբ նշանակալի պարտքային ռիսկի կենտրոնացում առկա չէ: Առավելագույն պարտքային ռիսկը ներկայացված է ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում՝ յուրաքանչյուր ֆինանսական ակտիվի հաշվեկշռային արժեքով:

դ) Իրացվելիության ռիսկ

Կազմակերպությունը վարում է իրացվելիության կառավարման քաղաքականություն՝ պահելով բավարար դրամական միջոցներ և դրանց համարժեքներ, ինչպես նաև բարձր իրացվելիություն ունեցող ակտիվներ՝ ժամանակին գործառնական պարտավորությունները մարելու նպատակով:

15. Իրական արժեք

Ղեկավարության համոզմամբ՝ ֆինանսական հաշվետվություններում ամորտիզացված արժեքով ճանաչված ֆինանսական ակտիվների և պարտավորությունների հաշվեկշռային արժեքները գրեթե հավասար են դրանց իրական արժեքին:

16. Պայմանականություններ

16.1 Գործարար միջավայր

Հայաստանում իրականացվող քաղաքական և տնտեսական փոփոխությունները, ինչպես նաև իրավական, հարկային և օրենսդրական համակարգերի զարգացումը շարունակական բնույթ են կրում: Հայաստանի տնտեսության կայունությունը և զարգացումը մեծապես կախված է այս փոփոխություններից: Կառավարությունը հաստատել է արդյունավետ կառավարման իր

հանձնառությունը, որը ենթադրում է հակակոռուպցիոն ջանքեր, թափանցիկություն և հաշվետվողականություն:

2020թ. մարտ ամսին Առողջապահության համաշխարհային Կազմակերպությունը 2019թ. դեկտեմբեր ամսին Չինաստանում բռնկված կորոնավիրուսը (COVID-19) դասակարգեց որպես համավարակ: Կորոնավիրուսն արդեն իսկ էական ազդեցություն է ունեցել համաշխարհային տնտեսության և խոշոր ֆինանսական շուկաների վրա:

Հայաստանի Հանրապետության կառավարությունը և Կենտրոնական բանկը տնտեսության վրա կորոնավիրուսի ազդեցությունը մեղմացնելու նպատակով իրականացնում են շարունակական միջոցառումներ: Ի թիվս այլ միջոցառումների, վերջիններս ներառում են նաև տուժած ճյուղերի և անհատների փոխառությունների սուբսիդավորում և վարկային «արձակուրդներ»:

Կազմակերպության ղեկավարությունը գտնում է, որ իրացվելիության ընթացիկ մակարդակը բավարար է կայուն գործունեության համար: Կազմակերպությունը պարբերաբար վերանայում է իր իրացվելիության մակարդակը և, անհրաժեշտության դեպքում, պատրաստ է կիրառել իրացվելիության աջակցության համապատասխան գործիքակազմ:

Իրավիճակը Հայաստանի Հանրապետությունում էլ ավելի է սրվել Ադրբեջանի Հանրապետության կողմից սանձազերծված պատերազմի արդյունքում: Չնայած կնքված զինադադարի համաձայնագրին՝ դեռևս անորոշ են պատերազմի հետևանքները Հայաստանի տնտեսության վրա թե կարճաժամկետ, և թե երկարաժամկետ առումներով:

2022թ.Ուկրաինական հակամարտությունը շատ արագ տարածվեց, ինչը մեծ ազդեցություն ունի և դեռևս կունենա ամբողջ աշխարհի վրա:

Վերոնշյալ իրադարձությունները կարող են հետագայում էական ազդեցություն ունենալ Կազմակերպության ապագա գործունեության և ֆինանսական կայունության վրա, որոնց ամբողջական հետևանքները դժվար է կանխատեսել ներկա պահին: Ապագա տնտեսական և քաղաքական իրավիճակը և վերջիններիս ազդեցությունը Կազմակերպության գործունեության վրա կարող են տարբերվել Կազմակերպության ղեկավարության ներկա սպասումներից:

Տվյալ ֆինանսական հաշվետվությունները չեն արտացոլում վերը նկարագրվածի հնարավոր ապագա ազդեցությունը Կազմակերպության գործունեության վրա:

16.2 Ապահովագրություն

Հայաստանի Հանրապետության տնտեսության զարգացման ներկա փուլում ապահովագրության շատ տեսակներ զարգացման սկզբնական փուլում են և լայնորեն չեն կիրառվում: Սա է պատճառը, որ Կազմակերպությունն ապահովագրված չէ գործունեության ընդհատման, ակտիվների կորստի կամ այլ անձանց կողմից պարտավորությունների չկատարման հետևանքով վնասներ կրելու իրադարձություններից: Քանի դեռ Կազմակերպությունն ապահովագրված չէ համապատասխան ռիսկերից, առկա է ակտիվների կորստի կամ ոչնչացման վտանգ, ինչը կարող է անբարենպաստ ազդեցություն ունենալ նրա գործունեության և ֆինանսական վիճակի վրա: Բացառություն են կազմում սեփականատերերի կողմից ավտոմեքենաների պարտադիր ապահովագրությունները, որոնք հատուցում են վթարի դեպքում երկրորդ կողմին պատճառված վնասները:

16.3 Հարկեր

Հայաստանի Հանրապետության հարկային համակարգը համեմատաբար նոր է և աչքի է ընկնում օրենսդրական հաճախակի փոփոխություններով, հարկային մարմնի պարզաբանումներով, որոնք կարող են հակասական կամ տարընթերցումների տեղիք տալ: Հարկային մարմինները կարող են ստուգումների արդյունքում տույժ, տուգանքներ նշանակել: Նշված հանգամանքները կարող են առաջացնել նշանակալի հարկային ռիսկեր: Կազմակերպության ղեկավարությունը վստահ է, որ իր հարկային պարտավորությունները հաշվարկել է պատշաճ կերպով՝ հիմնվելով ՀՀ հարկային օրենսդրության՝ իր մեկնաբանությունների վրա: Սակայն հարկային մարմինների մեկնաբանությունները կարող են տարբերվել սույն ֆինանսական հաշվետվությունները պատրաստելիս հիմք ընդունած

մեկնաբանություններից, և եթե դրանք հաստատվեն, ապա դրանց ազդեցությունը կարող է նշանակալի լինել:

16.4 Շրջակա միջավայրի հետ կապված խնդիրներ

Ղեկավարության համոզմամբ Կազմակերպությունը բավարարում է շրջակա միջավայրի հետ կապված Կառավարության պահանջները, և վստահ է, որ Կազմակերպությունը շրջակա միջավայրի հետ կապված ընթացիկ էական պարտավորություններ չունի: Այնուամենայնիվ, Հայաստանի Հանրապետությունում, շրջակա միջավայրի վերաբերյալ օրենսդրությունը զարգացման փուլում է, և դրա հավանական փոփոխություններն և օրենդրության մեկնաբանություններն ապագայում կարող են էական պարտավորություններ առաջացնել:

16.5 Դատական հայցեր

2023թ. դեկտեմբերի 31-ի և սույն ֆինանսական հաշվետվությունների վավերացման ամսաթվի դրությամբ Կազմակերպության դեմ հարուցված դատական հայցեր չկան:

17. Հաշվետու ամսաթվից հետո տեղի ունեցող դեպքեր

2022թ. Ուկրաինական հակամարտությունը շատ արագ տարածվեց, ինչը մեծ ազդեցություն ունի և դեռևս կունենա ամբողջ աշխարհի վրա:
Ռուբլու արժեզրկումը ռուբլով արտահայտված դրամական փոխանցումների վրա էական ազդեցություն չի ունենա: Փոխարենը դա կազդի այդ փոխանցումների դոլարային արտահայտության վրա: Բնականաբար ԱՄՆ դոլարով արտահայտված դրամական փոխանցումները որոշակիորեն կնվազեն: Պատմականորեն ՀՀ տնտեսությունը մի քանի անգամ բախվել է նման ցնցումների հետ: Ի տարբերություն նախորդ ժամանակների, ներկայումս Հայաստանի տնտեսությունը շատ ավելի քիչ է կախված դրամական փոխանցումների ծավալներից, իսկ ՌԴ կշիռը այդ դրամական փոխանցումներում զգալիորեն ավելի փոքր է: Կարծում ենք, որ դրամական փոխանցումների որոշակի կրճատումը բացասական կազդի ՀՀ ներքին պահանջարկի վրա, սակայն այդ ազդեցությունը գնահատում ենք ոչ շատ մեծ:
Վերոնշյալ իրադարձությունները կարող են հետագայում էական ազդեցություն ունենալ Կազմակերպության ապագա գործունեության և ֆինանսական կայունության վրա, որոնց ամբողջական հետևանքները դժվար է կանխատեսել ներկա պահին: Ապագա տնտեսական և քաղաքական իրավիճակը և վերջիններիս ազդեցությունը Կազմակերպության գործունեության վրա կարող են տարբերվել Կազմակերպության ղեկավարության ներկա սպասումներից:

Տվյալ ֆինանսական հաշվետվությունները չեն արտացոլում վերը նկարագրվածի հնարավոր ապագա ազդեցությունը Կազմակերպության գործունեության վրա:

Կազմակերպությունը չի կնքել այնպիսի պայմանագրեր, որոնք, կախված ապագա որևէ դեպքի/դեպքերի տեղի ունենալուց կամ չունենալուց, ենթադրում են հետագա վճարումներ:

18. Գործարքներ կապակցված կողմերի հետ

18.1 Վերահսկողություն

Կազմակերպության վերջնական վերահսկող է հանդիսանում Բագրատ Նավոյանը:

Ներկայացվող հաշվետվությունների առումով կապակցված կողմերն են նաև համատեղ հսկողության տակ գտնվող կազմակերպությունները, տնօրենը, ինչպես նաև նրանց հետ կապակցված անձինք:

Փոխկապակցված անձի անվանում	Փոխկապակցվածության բնույթը
Բագրատ Նավոյան	Նախագահ
«Նաիրի մանկապատանեկան մարզադպրոց» ՍՊԸ	Բագրատ Նավոյանը հանդիսանում է ՍՊԸ-ի 100 տոկոս բաժնեմասի բաժնետեր
«Բագրատ Տուր» ՍՊԸ	Բագրատ Նավոյանը հանդիսանում է ՍՊԸ-ի 100 տոկոս բաժնեմասի բաժնետեր

Կազմակերպությունն իր գործունեության ընթացքում իրականացնում է գործարքներ կապակցված կողմերի հետ: Կապակցված կողմերի հետ իրականացված գործարքները հետևյալն են.

1.Գործարքներ վերջնական հսկողի հետ

Հազար դրամ	Մնացորդը 2023թ. դեկտեմբերի 31-դրությամբ	2023թ.		Մնացորդը 2022թ. դեկտեմբերի 31-դրությամբ
Ստացված շնորհներ և նվիրատվություններ	-	-	-	-
Տրված փոխառություններ	2,621,184	(286,976)	588,916	2,319,244

	Մնացորդը 2022թ. դեկտեմբերի 31-դրությամբ	2022թ.		Մնացորդը 2021թ. դեկտեմբերի 31-դրությամբ
Տրված փոխառություններ	2,319,244	(603,475)	457,483	2,465,236

2.Գործարքներ համատեղ հսկողության տակ գտնվող կազմակերպությունների հետ

Հազար դրամ	Մնացորդը 2023թ. դեկտեմբերի 31-դրությամբ	2023թ.		Մնացորդը 2022թ. դեկտեմբերի 31-դրությամբ
Տրված կանխավճարներ	3,928	(7,452)	10,697	683
Ձեռքբերումներ	-	(17,260)	17,260	-

	Մնացորդը 2022թ. դեկտեմբերի 31-դրությամբ	2022թ.		Մնացորդը 2021թ. դեկտեմբերի 31-դրությամբ
Տրված կանխավճարներ	683	(6,169)	6,236	616
Ձեռքբերումներ	-	(16,573)	16,528	45

3.Գործարքներ ղեկավարության հետ

Հազար դրամ	Մնացորդը 2023թ. դեկտեմբերի 31-դրությամբ	2023թ.		Մնացորդը 2022թ. դեկտեմբերի 31-դրությամբ
Աշխատավարձ	-	(2,154)	2,154	-

	Մնացորդը 2022թ. դեկտեմբերի 31-դրությամբ	2022թ.		Մնացորդը 2021թ. դեկտեմբերի 31-դրությամբ
Աշխատավարձ	-	(1,223)	1,223	-

Audit
ARMENIA

«ԱԼԱՇԿԵՐՏ» ՖՈՒՏԲՈԼԱՅԻՆ ԱԿՈՒՄԲ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ

ՀԱՄԱՁԱՅՆԵՑՎԱԾ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԵՐ

«ԱՈՒԴԻՏ ԱՐՄԵՆԻԱ»
Փակ Բաժնետիրական Ընկերություն
ՀՎՀՀ - 01569467

Audit ARMENIA

«Audit Armenia»
Closed Joint Stock Company
«Аудит Армения»
Закрытое Акционерное Общество
TIN / ИНН - 01569467

(012) 66 66 66 (055) 66 06 35 www.auditarmenia.am info@auditarmenia.am www.facebook.com/auditarmenia

0012, ՀՀ. ք.Երևան, Արաբկիր ՎՇ, Վաղարշյան 12, 5-րդ հարկ

«Ալաշկերտ» ֆուտբոլային ակումբ ՀԿ

Գործադիր տնօրեն

Լիպարիտ Նավոյանին

ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ
ՓԱՍՏԱՑԻ ՍՏԱՑՎԱԾ ՏՎՅԱԼՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Հարգելի պարոն Նավոյան,

2023թ. նոյեմբերի 30-ին կնքված համաձայնեցված ընթացակարգերի ծառայությունների մատուցման պայմանագրի տեխնիկական առաջադրանքի համաձայն, մենք իրականացրել ենք Ձեզ հետ համաձայնեցված ընթացակարգերը և ներկայացնում ենք փաստացի ստացված տվյալների վերաբերյալ հաշվետվությունը՝ «Ալաշկերտ» ֆուտբոլային ակումբ ՀԿ ֆինանսական հաշվետվությունների առնչությամբ, ինչպես նաև կրեդիտորական և դեբիտորական պարտքերի, աշխատակիցների և սոցիալական/հարկային կառույցների նկատմամբ ժամկետանց վճարումների առնչությամբ:

Մենք, համաձայն «Հարակից ծառայություններ» 4400 միջազգային ստանդարտի (ISRS), իրականացրել ենք աուդիտին բնորոշ այնպիսի ընթացակարգեր, որոնք համաձայնեցված են Ձեր և Արտոնագրող Մարմնի՝ Հայաստանի Ֆուտբոլի Ֆեդերացիայի հետ:

Իրականացված ընթացակարգերը նախատեսված են բացառապես Ձեզ օժանդակելու համար՝ Հայաստանի Ֆուտբոլի Ֆեդերացիայի կողմից սահմանված, ֆուտբոլային ակումբների արտոնագրման պահանջներին բավարարելու խնդրում:

Իրականացված ընթացակարգերը իրենցից չեն ներկայացնում աուդիտ կամ դիտարկում՝ համաձայն աուդիտի ստանդարտների, և հետևաբար՝ հավաստիացումներ չեն տրվելու:

Մեր հաշվետվությունը չպետք է օգտագործվի որևէ այլ նպատակներով, և այն ներկայացվում է միմիայն Ձեզ տեղեկատվություն տրամադրելու ակնկալիքով:

Աշխատակիցների և սոցիալական/հարկային կառույցների նկատմամբ ժամկետանց վճարումների առնչությամբ փաստացի ստացված տվյալներ.

Մենք իրականացրել ենք Ձեզ հետ համաձայնեցված ընթացակարգերը, որոնց նպատակն է մինչև 28.02.2024թ. մեզ ներկայացված աշխատակիցների ցուցակի, նրանց նկատմամբ մինչև 28.02.2024թ. վճարման ենթակա պարտավորությունների, ինչպես նաև հարկերի գծով պարտավորությունների վերաբերյալ ձեռք բերել փաստացի տվյալներ:

Մեզ տրամադրված հաշվետվությունների պատրաստման, հաստատման և ներկայացման համար պատասխանատվություն է կրում Ակումբի ղեկավարությունը:

Մեր աշխատանքները ներառել են հետևյալ գործընթացները.

- Ակումբի ղեկավարության կողմից պատրաստված՝ աշխատողների ցուցակի ստացում,
- պատահականության սկզբունքով ընտրված (աշխատակիցների 80%) աշխատակիցների նամակ-հավաստագրերի ձեռքբերում և համեմատում աշխատողների ցուցակի հետ,
- Ակումբի ղեկավարության կողմից պատրաստված հայտարարության ստացում՝ առ այն, որ Ակումբը 31.03.2024թ. դրությամբ մինչև 28.02.2024թ. վճարման ենթակա ժամկետանց պարտավորությունները աշխատավարձերի գծով մարվել են,
- նախորդ կետում նշված հայտարարությունը հավաստող վճարման փաստաթղթերի ուսումնասիրություն,
- ղեկավարության հայտարարությունը հիմնավորող փաստաթղթերի, այդ թվում՝ նաև աշխատանքային ընտրանքում ընդգրկված աշխատակիցների հետ պայմանագրերի ուսումնասիրություն,
- 31.12.2023թ. ֆինանսական հաշվետվություններում արտացոլված աշխատավարձի գծով հարկերի համաձայնեցում Ակումբի կողմից ներկայացված աշխատավարձերի ցուցակի հետ,
- Ակումբի ղեկավարության կողմից պատրաստված հայտարարության ստացում այն մասին, որ 31.03.2024թ. դրությամբ մինչև 28.02.2024թ. վճարման ենթակա աշխատավարձի գծով ժամկետանց հարկային պարտավորությունները, որոնք առկա էին 28.02.2024թ. դրությամբ մարվել են.
- նախորդ կետում նշված հայտարարությունը հավաստող վճարման փաստաթղթերի ուսումնասիրություն:

Մեր կողմից հայտնաբերված տվյալները ներկայացնում ենք ստորև.

1. Հիմնվելով բացառապես վերոնշյալ աշխատանքների կատարման վրա՝ մենք եկանք այն եզրահանգման, որ Ակումբը մինչև 28.02.2024թ. վճարման ենթակա աշխատավարձերի գծով ժամկետանց պարտավորություններ չի ունեցել և 31.03.2024թ. դրությամբ չունի դրանցից բխող ժամկետանց պարտավորություններ:
2. Հիմնվելով բացառապես վերոնշյալ աշխատանքների կատարման վրա՝ մենք եկանք այն եզրահանգման, որ 31.12.2023թ.և 28.02.2024թ. Ակումբը աշխատավարձերի գծով հաշվարկված և վճարման ենթակա հարկերի գծով պարտավորությունները մարել է և 31.03.2024թ. դրությամբ չունի դրանցից բխող ժամկետանց պարտավորություններ:
3. Վերը նշվածից բացի Ակումբը՝ համաձայն ՀՖՖ արտոնագրման կանոնակարգի, պարտավորվում է ներկայացնել ապագա ֆինանսական տեղեկատվություն:

ՈՒԵՖԱ-ի, ՀՖՖ-ի և այլ ակումբների նկատմամբ ժամկետանց վճարումների առնչությամբ փաստացի ստացված տվյալներ.

Մենք իրականացրել ենք Ձեզ հետ համաձայնեցված ընթացակարգերը, որոնց նպատակն է մինչև 28.02.2024թ. վճարման ենթակա կրեդիտորական և դեբիտորական պարտավորությունների վերաբերյալ, ձեռք բերել փաստացի տվյալներ:

Մեզ տրամադրված հաշվետվությունների պատրաստման, հաստատման և ներկայացման համար պատասխանատվություն է կրում Ակումբի ղեկավարությունը:

Մեր աշխատանքները ներառել են հետևյալ գործընթացները.

- Ակումբի ղեկավարության կողմից պատրաստված հայտարարության ստացում այն մասին, որ Ակումբը առ մինչև 28.02.2024 թվականը վճարման ենթակա ժամկետանց դեբիտորական և կրեդիտորական պարտքեր չի ունեցել և 31.03.2024թ. դրությամբ չունի դրանցից բխող ժամկետանց պարտավորություններ,
- կրեդիտորական և դեբիտորական պարտավորությունների հաշվետվություններում արտացոլված գումարների և 31.12.2023 թվականի ֆինանսական հաշվետվությունների համապատասխան հոդվածի մնացորդների համապատասխանեցում,
- գործարքների վերաբերյալ քաղվածքների ուսումնասիրություն և գործարքների նկատմամբ կրեդիտորական և դեբիտորական պարտավորությունների ճշգրտում:

Մեր կողմից փաստացի հայտնաբերված տվյալները ներկայացնում ենք ստորև.

1. Հիմնվելով բացառապես վերոնշյալ աշխատանքների կատարման վրա՝ մենք եկանք այն եզրահանգման, որ 28.02.2024թ. Ակումբը վճարման ենթակա ժամկետանց դեբիտորական և կրեդիտորական պարտավորություններ չունի և, 31.03.2024թ դրությամբ չունի դրանցից բխող այլ պարտավորություններ:

«Աուդիտ Արմենիա» ՓԲԸ

11 ապրիլի, 2024թ.
Ք. Երևան

Աննա Ավետիսյան

Տնօրեն-Բաժնետեր
Աուդիտի ղեկավար